

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՎԼՍԱՐԱՆ**

**ՍԱՆԹՈՌԻՍԵԱՆ ՍԵՐԳԵՅ ԳԱԳԻԿԻ**

**ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱԿՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԸ**

Ը.00.03 - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությանք տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում

Գիտական դեկան՝

Մնացականացիոն դոկտոր, պրոֆեսոր  
Վարդան Բաբկենի Բոստանջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մնացականացիոն դոկտոր, պրոֆեսոր  
Սամվել Սերգեյի Ավետիսյան

Մնացականացիոն թեկնածու, դոցենտ  
Գևորգ Ֆերոհնանտի Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Ա. Քոթանյանի անվան  
Մնացականացիոն ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 27-ին ժամը 13<sup>30</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի Մնացականացիոն թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Նաև 0009, ք. Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 26-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Ա. Յ. Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Դետագուտության թեմայի արդիականությունը:** Պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման առումով, ակնհայտորեն, կարևոր նշանակություն ունի երկրում գործող ֆինանսական վերահսկողության համակարգը, որի արդյունավետ գործունեությունն, իր հերթին, պայմանավորված է վերահսկողության ձևերով, տեսակներով և մեթոդներով: Դրանց շարքում, ակնհայտորեն, իր կարևորությամբ հատկապես առանձնանում է պետական վերահսկողությունը, որն ուղղված է պետության ֆինանսատնտեսական քաղաքականության իրականցմանը, ֆինանսական համակարգի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, պետական սեփականության և ֆինանսական միջոցների արդյունավետ և խնայողաբար օգտագործմանը, ֆինանսական պարտավորությունների ժամանակին և պատշաճ կատարմանը: Պետական ֆինանսական վերահսկողության միջոցով հնարավորություններ են ստեղծվում կանխարգելել ֆինանսաբյուջետային բնույթի խախտումները, կանխել պետական միջոցների անարդյունավետ և ոչ նպատակային օգտագործումը, վերադարձնել ապօրինի օգտագործված միջոցները: Այն, միաժամանակ, ապահովում է պետության ֆինանսատնտեսական համակարգի բնականոն գործունեությունը և պետական ֆինանսների արդյունավետ օգտագործումը: Դիմական շեշտադրումը կատարելով բյուջետային միջոցների օգտագործման օրինականության, նպատակայնության և տնտեսական արդյունավետության վրա, պետական ֆինանսական վերահսկողությունը հնարավորություն է տալիս ուղղորդել այդ գործընթացը և մշակել մեխանիզմներ օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելման համար:

Կարելի է նշել, որ պետական ֆինանսական վերահսկողության ուղղություններից իր կարևորությամբ հատկապես առանձնանում է բյուջետային վերահսկողությունը, որը, որպես բյուջետային միջոցների կառավարման գործառույթ, պետք է ուղղված լինի պետական կառավարման մարմինների խնդիրների լուծմանը և նպատակների ձեռք բերմանը: Գնահատելով պետական ֆինանսական ռեսուրսների օգտագործման նպատակային նշանակությունը, ռացիոնալությունը, լրիվությունը և հասցեականությունը, բացահայտելով ֆինանսատնտեսական գործարքների իրականացման գործընթացում արդյունավետության և օրինականության սկզբունքներից շեղումները, բյուջետային վերահսկողությունը դառնում է պետական կառավարման կարևոր գործիք: Ըստ էության, այն հանդիսանում է տնտեսության և պետության կենսագործունեության վրա ներգործության կարևոր միջոց:

Ծուկայական հարաբերություններին անցմամբ պայմանավորված արմատական քաղաքական և տնտեսական վերափոխումների իրականացումը, ի թիվս այլ խնդիրների, պահանջում է նաև բյուջետային համակարգի համալիր վերափոխում, որի հիմնական

նպատակներից մեկն է հանդիսանուն ֆինանսական ռեսուլսների վերաբաշխման և օգտագործման համակարգերի արդյունավետության բարձրացումը: Որպես կանոն, բյուջետային միջոցների անարդյունավետ օգտագործումը բյուջետային վերահսկողության գործուն համակարգի և ֆինանսական միջոցների բաշխման հստակ ընթացակարգերի բացակայության հետևանք է: Բացի այդ, բյուջետային վերահսկողության արդյունավետությունը որոշակիորեն կախված է նաև բյուջետային գործընթացում կիրառվող բյուջետավորման մեթոդից: Այս առումով, տնտեսական զարգացման ներկա փուլում հիմնական շեշտը դրվում է բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման վրա, ինչի համար առաջարկվում է ծախսերի կառավարման փոխարեն կիրառել արդյունքների կառավարումը: Այս ռազմավարության եռթյունը կայանում է նրանում, որ բյուջետային քաղաքականության առումով հիմնական պլան են մղվում նախապես ակնկալվող արդյունքների սահմանումը և դրանց ձեռք բերման նպատակով համապատասխան ծախսային քաղաքականության իրականացումը: Նման քաղաքականությունը Ենթադրում է ոչ միայն բյուջեի կազմման, այլ նաև դրա կատարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմի որակական փոփոխություն, քանի որ բյուջետային գործընթացի բոլոր փուլերը փոխսկապակցված են:

Տնտեսական զարգացման ներկա փուլում հանրապետությունում բյուջետային գործընթացի զարգացման հիմնական ուղիներից մեկն է հանդիսանում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումն, ինչն, ակնհայտորեն, Ենթադրում է նաև բյուջետային վերահսկողության համակարգի կատարելագործում և այդ նպատակով նոր մեթոդների և մոտեցումների կիրառում: Այս կապակցությամբ, հատկապես կարևորվում է բյուջետային ֆինանսավորում ստացող սուբյեկտների գործունեության արդյունքների գնահատման ցուցանիշների համակարգի մշակումը և ներդրումը, որն առ այսօր բացակայում է հանրապետությունում և ստեղծում լուրջ խոչընդոտներ բյուջետավորման առաջադեմ մեթոդների կիրառման համար: Մասնավորապես, պետական միջոցների ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը գնահատող ցուցանիշների բացակայությունը լուրջ դժվարություններ է ստեղծում հատկապես բյուջետային վերահսկողության իրականացման համար: Այս առումով, հատկապես կարևորվում է բյուջետային վերահսկողության համակարգի ներդաշնակեցումը բյուջետային պլանավորման ժամանակակից մեթոդներին, ինչը Ենթադրում է բյուջետային վերահսկողության իրականացման գործընթացում նոր մոտեցումների կիրառում: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

**Դեռազոտության նպատակը և խնդիրները:** Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական տնտեսության պայմաններում բյուջետային վերահսկողության համակարգի

արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ֆինանսական վերահսկողության տնտեսագիտական բովանդակությունը և բացահայտել դրա արդյունավետության վրա ազդող գործոնները,
- ուսումնասիրել բյուջետային վերահսկողության իրականացման ինստիտուցիոնալ մեխանիզմները և դրանց գործունեության առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում,
- վերլուծել բյուջետային վերահսկողության համակարգի գործունեության միջազգային փորձը և գնահատել դրանց կիրառման հնարավորությունները հանրապետությունում,
- ուսումնասիրել հանրապետությունում գործող բյուջետային վերահսկողության համակարգի առանձնահատկությունները և բացահայտել դրա արդյունավետության բարձրացման ոլորտում առկա հիմնախնդիրները,
- մշակել բյուջետային վերահսկողության արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումները, բացահայտել ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործման ուղղությունները:

**Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:** Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ իրականացվող բյուջետային վերահսկողությունը:

**Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:** Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

**Աշխատանքի գիտական նորույթը:** Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում:

- բացահայտվել են բյուջետային վերահսկողության արդյունավետության ապահովման մակրոտնտեսական և կազմակերպարավական նախադրյալները, ներկայացվել են

ծախսերի պլանավորման և վերահսկողության ընթացակարգեր, մշակվել է բյուջետային վերահսկողության արդյունավետության գնահատմանը և բյուջետային վերահսկողության գործընթացում ծախսերի արդյունավետության բարձրացմանը ուղղված ցուցանիշների և չափորոշիչների համախումբ,

- բացահայտվել են հանրապետության բյուջետային վերահսկողության համակարգում առկա բացքողումները և թերությունները, առաջարկվել են լուծումներ բյուջետային վերահսկողության կատարելագործման միջոցով բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- բյուջետային պլանավորման նախահաշվային և ծրագրանապատճենային մեթոդների համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են բյուջետային վերահսկողության առանձնահատկությունները, հիմնավորվել են ծրագրային բյուջետավորման դեպքում բյուջետային վերահսկողության արդյունավետության բարձրացման հնարավորությունները և մշակվել են մոտեցումներ դրանց գործնական կիրառման ուղղությամբ:

**Նետազոտության կիրառական մշանակությունը:** Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է բյուջետային վերահսկողության կատարելագործմանն ուղղված լուծումների առաջարկման մեջ, որոնք կարող են հիմք հանդիսանալ տնտեսական համակարգում առկա բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման համար:

Բյուջետային վերահսկողության համակարգի արդյունավետության բարձրացման և բյուջետային գործընթացի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում բյուջետային համակարգի կատարելագործման միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ուղղությամբ: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

#### **Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանում :

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են 3 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության ժապարը և կառուցվածքը:** Ատենախոսության տեքստը շարադրված է 120 էջի վրա: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և 8 էջ հավելվածներից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Առաջարանում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

**Հետազոտության առաջին՝ «Բյուջետային վերահսկողության էությունը և տնտեսական նշանակությունը» գլուխը նվիրված է ֆինանսական վերահսկողության խնդիրների և հիմնական գործառույթների ուսումնասիրությանը, պետական ֆինանսական վերահսկողության համակարգում բյուջետային վերահսկողության դերի գնահատմանը և բյուջետային վերահսկողության սկզբունքների և դրանց գործնական իրացման մեխանիզմների քննարկմանը:**

Շուկայական հարաբերություններին անցման ուղղությամբ հանրապետությունում լայնամասշտաբ քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացումը, պետության և տնտեսության փոխհարաբերությունների արմատական փոփոխությունը պահանջեցին պետական ֆինանսական վերահսկողության մեթոդների, տեսակների և ձևերի վերափոխում՝ որի հիմնական նպատակը շուկայական տնտեսավարման սկզբունքներին բավարարող համակարգի ձևավորումն էր: Ակնհայտ է, որ պետական ֆինանսական վերահսկողութան իրականացումը պետք է հիմնված լինի համապատասխան տեսական հիմքերի վրա և բխի տնտեսական նոր իրողություններից:

Ըստ էության, յուրաքանչյուր երկրի ֆինանսական համակարգի արդյունավետ գործունեության հիմնական նախապայմաններից մեկը հանդիսանում է պետական վերահսկողության համակարգի առկայությունը, որի միջոցով պետությունն իրականացնում է իր գործառույթները, պաշտպանում է սեփական ֆինանսական շահերը և հասարակության ու քաղաքացիների հետաքրքրությունները: Հարկ է նշել, որ ֆինանսական վերահսկողության հարցերը միշտ ել գտնվել են տարբեր մասնագետների ուշադրության կենտրոնում, ինչի վկայություն կարելի է համարել այդ ուղղությամբ միշտ ուսումնասիրությունների և գիտական հետազոտությունների առկայությունը:<sup>1</sup> Վերջիններիս վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս գոյություն ունեն էական տարբերություններ ոչ միայն ֆինանսական վերահսկողության առանձնահատկությունների սահմանման, այլ նաև դրա էության և բովանդակության, ինչպես նաև դասակարգման առումով: Դրանք հիմնականում կապված են շուկայական հարաբերությունների պայմաններում ֆինանսական վերահսկողության բովանդակության

<sup>1</sup> Рябухин С. Аудит эффективности использования государственных ресурсов. М: Наука, 2004г. 284стр. Саунин А. Аудит эффективности использования государственных средств: Вопросы теории и практики. М: Высшая школа, 2005г. 311стр. и др.

և մեթոդների վերաբերյալ տարբեր մասնագետների տեսակետների միջև գոյություն ունեցող տարբերությունների հետ:

Ըստ էության, պետական ֆինանսական վերահսկողության համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի բյուջետային վերահսկողությունը, որի հիմնական խնդիրը պետության կողմից բյուջետային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովումն է: Բյուջետային վերահսկողությունն անմիջականորեն իրականացվում է բյուջետային ցուցանիշների գնահատման միջոցով, որոնցից հիմնականները եկամուտներն ու ծախսերն են: Վերջիններիս կատարման ապահովումը բյուջետային վերահսկողության հիմնական խնդիրներից մեկն է, ինչը, ըստ էության, վկայում է պետական ֆինանսական մեխանիզմի գործունեության արդյունավետության մասին:

Սոցիալ-տնտեսական վերափոխումների, հասարակական-քաղաքական տրամադրման հիմքեն նաև ճգնաժամային երևոյթների խորացման փուլում, երբ պետության հիմնական խնդիրներից մեկն է դառնում հարկաբյուջետային համակարգի ամրապնդումը, էականորեն բարձրանում է բյուջետային վերահսկողության դերը: Հատկապես այդ շրջանում առավել մեծ կարևորություն է ձեռք բերում սահմանափակ բյուջետային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործման խնդիրը: Բյուջետային վերահսկողությունը, վերջին հաշվով, հիմնականում հանգում է բյուջետային միջոցների ձևավորման և օգտագործման գործընթացի վերահսկողությանը, որը պետական ֆինանսական վերահսկողության կարևոր ուղղություններից մեկն է հանդիսանում: Միաժամանակ, պետք է նշել, որ բյուջետային վերահսկողության վերաբերյալ ևս մասնագիտական գրականութան մեջ գոյություն չունի միասնական սահմանում: Մեր կարծիքով, բյուջետային վերահսկողությունը կարելի է սահմանել որպես բյուջետային գործընթացի մասնակիցների կողմից բյուջետային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ իրավասու մարմինների կողմից իրականացվող գործունեություն, որի նպատակների ձեռք բերումը ապահովվում է հետևյալ խնդիրների լուծմամբ.

- պետական ֆինանսական միջոցների օգտագործման նպատակային նշանակության, լրիվության, արդյունավետության և օրինականության գնահատում,
- պետական սեփականության օգտագործման օրինականության և պահպանության գնահատում,
- վերահսկվող սուբյեկտների կողմից ներկայացվող հաշվետվություններում իրականացված ֆինանսատնտեսական գործարքների ամբողջական արտացոլում, պետական սեկտորի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման ռեզերվների բացահայտում,

- բանկային համակարգի կողմից բյուջետային հաշվիներին համապատասխան միջոցների փոխանցման գործարքների նկատմամբ վերահսկողություն,
- բյուջետային միջոցներ հատկացնող և ստացող սուբյեկտների կողմից պետական միջոցների բաշխման և օգտագործման պահանջների պահպանման գնահատում,
- պետական կազմակերպություններում կառավարման և վերահսկողության համակարգերի արդյունավետության և ֆինանսական վիճակի գնահատում:

Ելելով նշվածից, կարող ենք կատարել հետևյալ հետևողությունները: Առաջին, բյուջետային վերահսկողությունը, ունենալով կարևոր դերակատարում պետության բնականոն գործունեության ապահովման հարցում, հանդես է գալիս նաև որպես գործառույթ: Երկրորդ, որպես պետական գործունեության յուրահատուկ տարր վերահսկողությունը օժտված է իր սեփական գործառույթներով, որոնք, խոշոր հաշվով, ուղղված են պետական միջոցների օգտագործման արդյունավետության ապահովմանը: Միաժամանակ, բյուջետային բարեփոխումների ներկա փուլում, երբ լայն տարածում են ստանում բյուջետավորման նոր, առավել առաջադեմ մեթոդները, որոշակիորեն փոխվում են նաև բյուջետային վերահսկողության հիմնական շեշտադրումները: Դա, իր հերթին, պահանջում է վերահսկողական գործունեության առանձնահատկությունների համակողմանի վերլուծություն և տնտեսական նոր իրողություններին այդ համակարգի աղապտացում:

**Ասեմախոսության երկրորդ՝ «Բյուջետային վերահսկողության առանձնահատկությունները և բյուջետային պլանավորման մեթոդները» գլուխը նվիրված է բյուջետային վերահսկողության կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրությանը, բյուջետային գործընթացի տարրեր փուլերում բյուջետային վերահսկողության առանձնահատկությունների վերլուծությանը և ՀՀ բյուջետային վերահսկողության համակարգի ընդհանուր գծերի ներկայացմանը:**

Պետական ֆինանսական վերահսկողության իրավական հիմքերը ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, համաձայն որի օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը, որն, ի թիվս այլ լիազորությունների, հաստատում է պետական բյուջեն, վերահսկողություն է իրականացնում դրա կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ, Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը: ՀՀ կառավարությունը Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում պետական բյուջեի կատարումը, դրա վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով, կառավարում է պետական սեփականությունը: Բյուջետային միջոցների և պետական ու

համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում անկախ մարմին հանդիսացող Վերահսկիչ պալատը, որի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը, և որին պալատը ներկայացնում է իր վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը: Այն արտաքին պետական վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմինն է և իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: Վերահսկիչ պալատի գործունեության սկզբունքներն են՝ անկախությունը, օրինականությունը, անաչառությունը եւ հրապարակայնությունը: Վերահսկիչ պալատը վերահսկողությունն իրականացնում է ոիտարկումների, ստուգումների, վերլուծությունների ձեւերով: Վերահսկիչ պալատն իրականացնում է վերահսկողության հետեւյալ տեսակները՝ ֆինանսական, համապատասխանության, արդյունավետության (կատարողական) եւ բնապահպանական վերահսկողություն:

#### Աղյուսակ 1.

#### ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դիմամիկան 2003-2012թթ.

Ցուցանիշներ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
ՀՆԱ իրական աճ ( % )	14.0	10.5	13.9	13.2	13.8	6.9	-14.2	2.1	4.6	7.2
Ներդրումներ/ՀՆԱ ( % )	24.3	24.9	30.5	35.9	37.8	40.9	33.8	33.4	31.3	30.0
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ, մլրդ. դրամ	292.0	302.2	374.7	441.5	588.0	785.3	672.1	759.7	852.4	946.2
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ՀՆԱ (%)	18.0	15.8	16.7	16.6	18.7	21.5	21.7	21.70	22.65	23.8
Հարկային եկամուտներ և տուրքեր, մլրդ. դրամ	227.4	267.0	321,5	385.1	498,9	621.1	520.2	591.1	650.0	878.4
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ (%)	14.0	14.0	14.4	14.5	16.1	17.0	16.77	16.88	17.27	22.1
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր, մլրդ. դրամ	312.7	333.9	417.2	481.2	634.7	810.6	912.8	934.1	1.001.0	1.006.1
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ՀՆԱ (%)	19.3	17.5	18.6	18.1	20.2	22.2	29.42	26.7	26.66	25.3
Պետական բյուջեի դեֆիցիտ մլրդ. դրամ	-	-	-	-	-	-	240.7	174.4	148.6	59.9
Պետական բյուջեի դեֆիցիտ /ՀՆԱ (%)	1.3	1.7	1.9	1.5	1.5	1.2	7.76	4.98	3.95	1.5

Այսուսակ 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ վերջին տարիներին հանրապետությունում մակրոտնտեսական իրավիճակի փոփոխությունն անդրադարձել է նաև բյուջետային ծախսերի վրա, ինչը ենթադրում է բյուջետային վերահսկողության մեխանիզմների և ծավալների ավելացում: Միաժամանակ, էական փոփոխությունների է ենթարկվել նաև բյուջետային ծախսերի կառուցվածքը, ինչի մասին են վկայում այսուսակ 2-ի տվյալները:

Մասնավորապես, 2012 թվականին պետական բյուջեի ծախսային մասն էական փոփոխությունների չի ենթարկվել և կազմել է 1,006,1 մլրդ. դրամ՝ 2010 թվականի 934,1 մլրդ. դրամի և 2011 թվականի 1,001,0 մլրդ. դրամի դիմաց: 2012թվականին «պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշը կազմել է 25.3%, որը մոտ 1.3%-ով զիջում է 2011 և 2010 թվականների մակարդակին: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 87%-ը կամ 875,6 մլրդ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, իսկ 13 %-ը կամ 130.5 մլրդ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գուտ ծախսերին:

## Այսուսակ 2.

### ՀՀ 2008-2012թթ. պետական բյուջեների ծախսերը (մրդ. դրամ)

Գործառնական դասակարգման խմբերի անվանումները	2008	2009	2010	2011	2012
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	810.6	929.1	935.5	1,001.0	1,006,1
01. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	104.8	113.0	139.8	153.1	160,5
02. Պաշտպանություն	121.1	130.2	135.7	146.2	152,8
03. Քանարակական կարգ, ան- վտանգություն և դատական գործունեություն	61.7	69.5	56.6	60.8	76,7
04. Տնտեսական հարաբերություններ	89.4	133.8	113.1	97.0	71,1
05. Շրջակա միջավայրի պաշտպանություն	3.0	3.9	6.1	8.9	7,0
06. Բնակարանային ծառայություններ	14.0	21.1	46.4	48.4	14,3
07. Առողջապահություն	50.0	56.2	55.2	62.5	64,5
08. Քանգիստ, մշակույթ և կրոն	16.0	16.3	16.3	17.9	22,8
09. Կրթություն	103.5	107.5	99.9	108.4	102,8
10. Սոցիալական պաշտպանություն	212.6	243.6	244.4	271.9	291,7
11. Քիմանական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	34.3	33,9	21.9	25.8	41,9

Ակնհայտորեն, նման փոփոխությունները ենթադրում են նաև Վերահսկիչ պալատի գործունեության վերափոխում, ինչն իր հերթին պայմանավորված է տվյալ ոլորտի օրենսդրահրավական և կազմակերպական վերափոխումներով:

Տարբեր երկրներում գործող բյուջետային վերահսկողություն իրականացնող գրեթե բոլոր մարմիններն ունեն մեկ կարևոր ընդհանորություն՝ անկախության բարձր աստիճան: Միաժամանակ, պետք է նշել, որ ԱՊՀ անդամ պետություններից ոչ մեկում օրենսդրորեն ամրագրված չէ, թե ինչ է հասկացվում պետական ֆինանսական վերահսկողության ներքո, այլ միայն խոսքը գնում է այն իրականացնող մարմնի մասին: Պետական ֆինանսական վերահսկողության սահմանումը տրված չէ նաև այլ պետությունների բյուջետային օրենսդրերում և այլ օրենքներում: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, հիմնականում անդրադարձ է կատարվում բյուջետային վերահսկողություն իրականացնող մարմիններին: Այս առումով, առաջին տարբերությունը, որը կարելի է արձանագրել, այդ մարմինների անվանումներն են: Որոշ երկրներում բարձրագույն վերահսկողական մարմինները ստեղծված են պառլամենտի ենթակայությամբ, ինչը ապահովում է նրանց հարաբերական անկախությունը գործադրի իշխանությունից:

Վերջին տարիներին զարգացած երկրներում լայնորեն ներդրվում է վերահսկողութան նոր ձև, որը ծնունդ է առել 60-ական թվականներին Շվեյցարիամ և կոչվում է արդյունավետության վերահսկողություն: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ ֆորմալ օրինականությունը և հաշվապահական ճշգրտությունը սահմանվում են ոչ թե վերջնական նպատակ, այլ վերահսկողության սկիզբ: Ստուգումների հիմնական խնդիրն այս դեպքում հանդիսանում է իրականացվող գործառնությունների գործնականության և արդյունավետության գնահատումը: Արդյունավետ (երբ առկա են որոշակի օգուտներ), սակայն ոչ գործնական (չեն համապատասխանում պետության սոցիալ-տնտեսական նպատակների ձեռք բերման պահանջներին) ծախսերը վերահսկողության կողմից գնահատվում են ոչ անհրաժեշտ:

Ներկա փուլում, ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների փորձը, վերահսկողության ավանդական մեթոդներին լրացնելու են գալիս այնպիսի նոր գործիքներ, ինչպիսիք են ծրագրային գնահատականը և վերջնական արդյունքների գնահատումը: Ծրագրային գնահատման էությունը կայանում է նրանում, որ գերատեսչական կառավարման համակարգում ներդրվում է մի մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս կանոնավոր կերպով հետևել ծրագրի իրականացման ընթացքին, ժամանակին բացահայտել և վերացնել թերությունները, վերահսկել ծրագրային աշխատանքների իրականացման գրաֆիկի պահպանումը, համեմատել ձեռք բերված արդյունքներն ակնկալվողների հետ, համադրել իրականացված ծախսերը և

ստացված արդյունքները և, վերջին հաշվով, գնահատել ծրագրի փաստացի արդյունավետությունը:

Զարգացած երկրներում երկար ժամանակ վերահսկողության ժամանակ հիմնական ուշադրությունը սևովում էր հիմնական ցուցանիշների և միջոցների գնահատման վրա: Սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ այդ ցուցանիշների գնահատումը հնարավորություն չի տալիս ամբողջությամբ պարզելու բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով, վերջին տարիներին ծրագրերի իրականացման ավանդական բնութագրիչները լրացվում են վերջնական ցուցանիշներով, որոնք առավելագույնս հնարավորություն են տալիս պարզելու պետական ծրագրերի ազդեցությունը հասարակության լայն շերտերի վրա: Նման գործընթացը հիմնականում պայմանավորված է բյուջետավորման նոր՝ մասնավորապես, ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրմամբ, ինչը ենթադրում է բյուջետային վերահսկողության կազմակերպման և իրականացման նոր մոտեցումների կիրառում: Ծրագրային բյուջետավորման համակարգի պայմաններում ներքին բյուջետային վերահսկողության հիմնական միջոց է հանդիսանում արդյունավետության մոնիթորինգը, որի արդյունքներով կառավարման համապատասխան մարմինները որոշում են ընդունում այս կամ այն ծրագրի հետագա ֆինանսավորման նպատակահարմարության մասին: Այս դեպքում որպես տեղեկատվության աղբյուր են հանդես գալիս մատուցվող ծառայությունների որակի և դրանց ծավալի վերաբերյալ բնակչության շրջանում անցկացվող հարցումները, բյուջետային ծախսերի արդյունավետության վերաբերյալ կառավարման համապատասխան մարմինների հաշվետվությունները և այլն:

Ծրագրանպատակային բյուջետավորման մեթոդը լայնորեն կիրառող զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ այս դեպքում արտաքին պետական ֆինանսական վերահսկողության մարմիններն իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են պետական միջոցների և պետական սեփականության օգտագործման արդյունավետության վերահսկողության վրա: Բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործումը ենթադրում է պետական ֆինանսական վերահսկողության գործուն և նպատակադրված համակարգի ստեղծում:

**Ատենախոսության երրորդ՝ «ԴՐ բյուջետային վերահսկողության կատարելագործման ուղիները»** գլխում գնահատվել է բյուջետային պլանավորման մեթոդների ազեղցությունը բյուջետային վերահսկողության վրա և մշակվել են բյուջետային վերահսկողության արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումները հանրապետությունում:

Բյուջետային վերահսկողության բովանդակության վրա էական ազդեցություն ունեն բյուջետային պլանավորման կիրառվող մեթոդները: Այս տեսանկյունից, պետք է նշել, որ հանրապետությունում ներկայումս նախահաշվային մեթոդով բյուջետավորումը բավարար նախադրյալներ չի ստեղծում ստուգելու բյուջետային միջոցների բաշխման համապատասխանությունը սահմանված նպատակներին և խնդիրներին, ինչպես նաև չի սահմանում բյուջետային հիմնարկների կողմից ստացվող գումարների օգտագործման արդյունավետության գնահատման չափորոշիչները: Արդյունքում, բյուջետային վերահսկողության հիմնական խնդիրը դառնում է բյուջետային միջոցների հետ կապված գործառնությունների իրականացման օրինականության վերահսկումը:

Ընդհանուր առմանք, տնտեսական զարգացման ներկա փուլում տարբեր երկրներում իրականացվող բյուջետային վերափոխումների հիմնական ուղղություններից է հռչակվում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը, որի ձեռք բերման կարևոր ուղիներից մեկն է հանդիսանում բյուջետավորման գործընթացում ծրագրանպատակային մոտեցումների կիրառումը: Ծրագրային բյուջետավորման կոնցեպցիայի ներդրումը յուրաքանչյուր երկրում ունի իր առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է բյուջետային գործընթացի մասնակիցներին վերապահվող իրավասություններով:

Ծրագրանպատակային բյուջետավորման դեպքում արմատապես փոխվում են վերահսկողական միջոցառումների իրականացման նպատակները: Եթե բյուջետային պլանավորման նախահաշվային մեթոդի դեպքում բյուջետային վերահսկողության հիմնական նպատակը օրենսդրության պահանջների պահպանման և պետական միջոցներն ըստ նախահաշվի օգտագործման ապահովումն է, ապա ծրագրանպատակային բյուջետավորման դեպքում վերահսկողության հիմնական նպատակը դառնում է պետության բյուջետային քաղաքականության նպատակների ձեռքբերման աստիճանի գնահատումը: Եթե բյուջետային վերահսկողության օբյեկտը, անկախ բյուջետավորման մեթոդից, հանդիսանում է տնտեսական հարաբերությունների համախումբը, ապա ծրագրանպատակային բյուջետավորման դեպքում բյուջետային վերահսկողության առարկայի շրջանակները զգալիորեն ընդլայնվում են դրանց շարքում լրացուցիչ ցուցանիշների ընդգրկման արդյունքում, որոնք ցույց են տալիս բյուջետային ֆինանսավորում ստացողների կողմից իրենց վերապահված խնդիրների լուծման և նպատակների ձեռք բերման աստիճանը:

Ակնհայտ է, որ նախահաշվային մեթոդով բյուջետավորման պայմաններում վերահսկողական մարմինների կողմից կիրառվող գործիքները չեն համապատասխանում ծրագրանպատակային բյուջետավորման մոդելի պահանջներին, քանի որ դրանց կիրառումը հնարավորություն չի տալիս իրականացնելու բյուջետային միջոցների

օգտագործման արդյունքների գնահատում: Բյուջետային գործընթացում ծրագրանպատակային մոտեցումների կիրառումը ենթադրում է որոշակի քայլերի իրականացում: Մասնավորապես.

- Բյուջետային միջոցների օգտագործման գնահատման չափորոշիչների ավելացում սոցիալական և տնտեսական արդյունավետության չափորոշիչներով:
- Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության առողջություն, բյուջետային հիմնարկների գործունեության արդյունավետության ցուցանիշների մոնիթորինգի անցկացում, գործունեության պլանային և փաստացի արդյունքների համապատասխանության գնահատում:

Անկախ բյուջետավորման կիրառվող մեթոդից, ակնհայտ է, որ բյուջետային վերահսկողության գլխավոր նպատակը բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության ապահովումն է: Այս առումով, պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրվում է տարբեր կողմերից և իր մեջ ներառում է տնտեսական և սոցիալական բաղկացուցիչներ: Տնտեսական արդյունավետությունը նշանակում է կազմակերպության կողմից նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի ձեռք բերում: Սոցիալական արդյունավետությունը կապված է հասարակության համար բյուջետային միջոցների օգտագործումից վերջնական սոցիալական էֆեկտի ստացման հետ: Այս դեպքում անհրաժեշտ է մշակել քանակական և որակական այնպիսի ցուցանիշների համակարգ, որը թույլ կտա պարզել ստացված սոցիալական էֆեկտը: Մեր կարծիքով, բյուջետային միջոցների օգտագործման սոցիալական արդյունավետության ցուցանիշները պետք է կազմված լինեն հետևյալ խնբերից:

- Մատուցվող բյուջետային ծառայության որակի աստիճանը, որն իրենից ներկայացնում է ստացված արդյունքի քանակական և որակական բազաների հարաբերակցություն: Այն կարող է ցույց տալ ինչպես բյուջետային միջոցների օգտագործման դրական, այնպես էլ բացասական արդյունքները: Սոցիալական արդյունավետության գնահատումը բավականաչափ բարդ է, քանի որ որոշ դեպքերում ստացված արդյունքների վրա խիստ մեծ է արտաքին գործոնների ազդեցությունը և քիչ է կախված բյուջետային ֆինանսավորում ստացողների գործունեությունից:
- Բյուջետային ֆինանսավորում ստացողների առջև դրված նպատակների ձեռք բերման աստիճանը, որը հաշվարկվում է որպես բյուջետային միջոցների օգտագործման արդյունքների ցուցանիշների փաստացի նշանակության հարաբերություն այդ արդյունքների քանակական բազային:

- Արդյունքավետություն, որը արտացոլում է բյուջետային միջոցների օգտագործման փաստացի և պլանավորված արդյունքների հարաբերությունը:

Միաժամանակ, խիստ կարևորվում է նաև բյուջետային վերահսկողության համակարգի արդյունավետության գնահատումը, ինչը ենթադրում է համապատասխան ցուցանիշների և չափորոշիչների մշակում: Որպես այդպիսիք կարող են հանդես գալ.

- ստուգման ենթարկված բյուջետային ֆինանսավորման ծավալի և ընդհանուր բյուջետային միջոցների հարաբերակցության ցուցանիշը,
- ստուգումների արդյունքում հայտնաբերված ոչ արդյունավետ բյուջետային ծախսերի և ընդհանուր բյուջետային ֆինանսավորման, ինչպես նաև կոնկրետ բյուջետային միջոցներ ստացողների ծախսերի հարաբերակցության ցուցանիշը,
- բյուջետային միջոցների անարդյունավետ և ոչ նպատակային օգտագործման համար կիրառված պատժամիջոցների արդյունքում վերականգնված գումարների ցուցանիշը:

Ըստ էության, բյուջետային վերահսկողության արդյունավետության գնահատումը պետք է իրականացվի ցուցանիշների ընդհանուր համակարգի միջոցով և համալիր կերպով: Որպես այդպիսին պետք է դիտարկել ստուգումների իրականացման արդյունքում հայտնաբերված ֆինանսական չարաշահումների ծավալը և վերականգնված գումարների ծավալը՝ արտահայտված տոկոսային արտահայտությամբ անարդյունավետ օգտագործված միջոցների նկատմամբ: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ վճարի փոխհատուցման գծով ցուցանիշների կիրառումը բյուջետային վերահսկողության արդյունավետության գնահատման նպատակով խիստ հարաբերական է, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ բյուջետային միջոցների ոչ արդյունավետ օգտագործումը հետևանք է պետական կառավարման ընդհանուր համակարգի թերությունների, այլ ոչ թե ստուգման ենթակա օբյեկտի կոնկրետ պատասխանատուների գործունեության: Բացի այդ, գոյություն ունի մեկ կարևոր հանգամանք ևս, որը պետք է հաշվի առնել բյուջետային վերահսկողության արդյունավետության գնահատման ժամանակ: Խնդիրը վերաբերում է վերահսկողության պրոֆիլակտիկ բնույթին, երբ այն կարողանում է կանխարգելել հնարավոր ֆինանսական խախտումները և, այդ առումով, այն քանակական չափման հնարավոր չէ ենթարկել: Առանց հաշվի առնելու նշված գործոնի ազդեցությունը, բյուջետային վերահսկողության արդյունավետության գնահատումը ռեալ չի լինի: Այս առումով, կարծում ենք, որ կառավարչական գործունեության այնպիսի առանձնահատուկ ոլորտի վրա, ինչպիսին է ֆինանսական վերահսկողությունը, չի կարելի բացարձակ առումով կիրառել տնտեսական արդյունավետության՝ որպես կատարված ծախսի և ստացված արդյունքի հարաբերակցության մոտեցումը:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր վերահսկողության արդյունավետություն ուղղակի կախվածության մեջ է գտնվում այն միջոցների ծավալից և ներգործության գործիքներից, որոնց տիրապետում է վերահսկողություն իրականացնող մարմինը: Ակնհայտորեն, եթե վերջինս զրկված է հայտնաբերված խախտումների վերականգնման ուղղված իրավական մեխանիզմների տիրապետելուց, ապա վերահսկողության արդյունավետությունը զգալիորեն նվազում է: Մեր կարծիքով, բյուջետային վերահսկողության արդյունավետությունը պետք է գնահատել երկու դիտակետից. առաջին՝ ելնելով դրա կանխարգելիչ ներգործության հնարավորություններից և, երկրորդ, հաշվի առնելով պատճառված վնասի վերականգնված ծավաները:

**Ատենախոսության եզրակացություններում** ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ձևակերպված են եզրահանգումները՝

1. Ծրագրային բյուջետավորման պայմաններում ֆինանսական միջոցները բաշխվում են ըստ ռազմավարական նպատակների և ծրագրերի, այլ ոչ թե առանձին ծախսերի տեսակների: Բյուջետային ծրագրերը ձևավորվում են ռազմավարական գերակայությունների և համընդիանուր նպատակների հիման վրա, որոնք արժանանում են պառամենտի հավանությանը: Բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ նախարարությունների և գերատեսչությունների վերահսկողությունը միջոցների նպատակային օգտագործման արտարին վերահսկողությունից տեղափոխվում է ծախսերի արդյունավետության ներքին վերահսկողության: Ծրագրերի սոցիալական և տնտեսական արդյունավետության գնահատականներն օգտագործվում են հաջորդ բյուջետային տարվա ծախսերի պլանավորման ժամանակ: Ծրագրանպատակային բյուջեն հաշվի է առնում ընդունված որոշումների հետևանքները, հնարավորություն է տալիս համեմատել նպատակների ձեռք բերման տարբեր միջոցները և ընտրել օպտիմալ տարբերակները: Այս մեթոդի կիրառումը բարձրացնում է ընդունվող որոշումների հիմնավորվածությունը և հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կերպով վերահսկել դրանց կատարումը: Բյուջեի նախագիծը օրենսդիր մարմնին ներկայացվում է այնպիսի ձևով, որը հնարավորություն է տալիս հստակ կերպով հետևել պետական ծախսերի քաղաքականության և կառավարության քաղաքական նպատակների միջև առկա կապերին: Այլ կերպ ասած, բյուջեն դառնում է մի փաստաթուղթ, որում կառավարության պլանները և գերակայությունները առաջիկա տարվա կտրվածքով արտացոլված են ինչպես ֆինանսական ցուցանիշների, այնպես էլ պետական մարմինների գործունեության տնտեսական և սոցիալական արդյունավետության ցուցանիշների տեսքով:

2. Բյուջետային գործընթացը կարելի է դիտարկել որպես օրենսդրորեն սահմանված հաջորդական գործառնությունների շարք, որոնք իրականացվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կենտրոնացված դրամական ֆոնդերի ձևավորման, բաշխման և օգտագործման ընթացքում: Բյուջետային ֆոնդի ձևավորման ընթացքում իրականացվող գործառնություններին նախորդող վերահսկողությունը պետք է դասել նախնական ֆինանսական վերահսկողության շարքին: Մասնավորապես, դա բյուջետային եկամուտների պլանավորման ժամանակ իրականացվող վերահսկողությունն է: Բյուջետային եկամուտների ձևավորումից հետո իրականացվող ֆինանսական վերահսկողությունն, իր հերթին, պետք է դասել եզրափակիչ վերահսկողության շարքին: Քանի որ բյուջետային գործընթացի տարբեր փուլերին համապատասխանում է ֆինանսական գործառնությունների մի ամբողջ շարք, ապա դրանցից յուրաքանչյուրում կարող է իրականացվել ֆինանսական վերահսկողության բոլոր ծևերը:
3. Որպես բյուջետային ծախսերի պլանավորման ծախսային մեթոդի թերություններ կարելի է նշել եռամյա կտրվածքով բյուջետային պլանավորման ձևական բնույթը, բյուջետային միջոցների օգտագործման նպատակների սահմանման և արդյունավետության գնահատման չափորոշիչների, բյուջեի նախագծում բյուջետային քաղաքականության գերակայությունների ձեռք բերման աստիճանի գնահատման պայմանների, բյուջետային միջոցների օգտագործման արդյունքների և պլանավորման հիմնավորվածության արտաքին և ներքին վերահսկողության ընթացակարգերի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ֆինանսական արդյունքների գնահատման մեթոդների բացակայությունը:
4. Բյուջետային վերահսկողության կատարելագործման առումով խիստ կարևորվում է դրա արդյունավետության գնահատման համար համապատասխան մեխանիզմների և մոտեցումների մշակումը: Կառավարչական գործունեության արդյունավետության դիտարկման ժամանակ հիմնականում նկատի է առնվում ստացված արդյունքների համապատասխանությունը սահմանված նպատակներին՝ հաշվի առնելով այդ գործունեության իրականացման համար կատարված ծախսերը: Այս տեսանկյունից, ֆինանսական և, մասնավորապես, բյուջետային վերահսկողության արդյունավետության գնահատման չափորոշիչ կարող է հանդիսանալ արդյունքավետությունը՝ որպես վերահսկողություն իրականացնող մարմնի գործունեության արդյունքի համապատասխանություն դրված նպատակին: Լայն իմաստով, պետական ֆինանսական վերահսկողության նմանատիպ նպատակներ կարող են հանդիսանալ տնտեսության զարգացման

տեմպերի աճը, ֆինանսական համակարգի կայունության ապահովումը, բյուջետային եկամուտների ավելացումը, ծախսային մասի խնայողաբար օգտագործման ապահովումը և այլն: Նեղ իմաստով, բյուջետային վերահսկողության նպատակը բյուջետային ոլորտում իրավախսախտումների կրծատումը կամ վերացումն է, ինչը առանձնապես դժվարություն չի առաջացնում բյուջետային վերահսկողության արդյունքավետության գնահատման չափորոշիչների սահմանման առումով:

5. Բյուջետային վերահսկողության գործունակությունը՝ որպես օբյեկտիվ հետևանքների համախումբ, իրենից ներկայացնում է վերահսկողության արդյունավետության գնահատման հիմնական չափորոշիչը: Նման արդյունքի վերաբերյալ տեղեկատվության ստացումը պահանջում է վերահսկողություն իրականացնող մարմնի կոնկրետ գործունեության բովանդակության, վերահսկվող օբյեկտի կողմից նման գործունեությանը ցուցաբերվող ռեակցիայի, վերահսկողության արդյունքում կառավարչական գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին իրազեկվածություն: Դնարավոր չէ գնահատել վերահսկողության արդյունավետությունն առանց բացահայտելու այն արդյունքները, որոնք ձեռք են բերվել վերահսկվող օբյեկտի գործունեության բովանդակության վրա վերահսկողության ներգործության արդյունքում: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ վերահսկողության արդյունքները հավաստի չեն կարող լինել, եթե հաշվի չի առնվում վերահսկողության իրականացման համար կատարված ծախսերը, ստուգումների ժամանակահատվածը և նմանատիպ այլ գործուներ: Վերահսկողության արդյունավետությունը մեծ է, եթե առավել փոքր ծախսեր են կատարվում դրական արդյունքի ստացման համար: Դետևաբար բյուջետային վերահսկողության արդյունավետության չափորոշիչներից մեկը պետք է դիտարկել խնայողականությունը:
6. Բյուջետային վերահսկողության արդյունավետության չափորոշիչներ ներկայացվող արդյունքավետությունը, գործունակությունը, խնայողականությունը հնարավորություն են տալիս ընդամենը ընդհանուր պատկերացում կազմել վերահսկողության վերաբերյալ: Գործնական արդյունքների գնահատումը պահանջում է վերահսկողության լրացուցիչ ցուցանիշների մշակում, որոնց վրա է հիմնվում դրական արդյունքը, ինչը և հնարավորություն կտա գնահատել վերահսկողության որակը: Այդ ցուցանիշներն ունեն երկակի նշանակություն: Մի կողմից, դրանք վկայում են վերահսկողություն իրականացնող մարմնի աշխատանքի մակարդակի մասին, իսկ մյուս կողմից, թույլ են տալիս բացահայտել

Վերահսկվող օբյեկտում խախտումները և նպաստել դրանց վերացմանն ուղղված որոշումների կայացմանը:

7. Արդյունավետության ցուցանիշները, որպես կանոն, դասակարգվում են քանակականի և որակականի: Ակնհայտ է, որ վերահսկողության արդյունավետությունը չի կարող չափվել միայն անցկացված ստուգումների, ինչպես նաև վերահսկողության ենթարկված օբյեկտների և ընդունված որոշումների քանակով: Վերահսկողություն իրականացնող մարմնի գործունեության արդյունքների օբյեկտիվ գնահատումը կապված է այնպիսի ցուցանիշների բացահայտման և հաշվառման հետ, ինչպիսիք են ստուգումներ իրականացնող անձանց թվաքանակը, ծախսված ժամանակը և այլն: Նմանատիպ ցուցանիշների գնահատումը հնարավորություն է տալիս պարզել օգտագործված միջոցների և ստացված իրական արդյունքների համարժեքությունը:

**Դետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում.**

- Բոստանջյան Վ. Բ., Սանթրոսյան Ս. Գ., Ֆինանսական վերահսկողության խնդիրները և հիմնական գործառույթները, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու- № 2 (14), Երևան «Անանիա Շիարակացի» համալս. հրատ. 2012թ. էջ 11-19
- Սանթրոսյան Ս. Գ., Պետական ֆինանսական վերահսկողության կազմակերպման սկզբունքները և դրանց դասակարգման հիմքերը, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածումների ժողովածու- № 2 (14), Երևան «Անանիա Շիարակացի» համալս. հրատ. 2012թ. էջ 70-78
- Սանթրոսյան Ս. Գ., Բյուջետային վերահսկողության արդյունավետության գնահատման հիմնական մոտեցումները և դրանց կատարելոգործման ուղիները, «Ազրոգիտություն» №11 (12) Երևան 2012թ. էջ 675-678

# **САНТРОСЯН СЕРГЕЙ ГАГИКОВИЧ**

## **ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ МЕХАНИЗМОВ БЮДЖЕТНОГО КОНТРОЛЯ РА**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, денежное обращение и кредит”.

Защита состоится 27-ого декабря 2013г. в 13:30 на заседании специализированного совета ВАК РА 015 по экономике Ереванского государственного университета по адресу 0025, г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

### **РЕЗЮМЕ**

Диссертация посвящена совершенствованию проблем системы бюджетного контроля и разработке подходов и предложений по их повышению в условиях рыночной экономики.

В связи с повышением эффективности использования государственных финансовых средств, несомненно, важное значение имеет действующая система финансового контроля, чья эффективная деятельность, в свою очередь, обусловлена формами, видами и методами контроля. В этой связи своей значимостью особенно выделяется государственный контроль, который направлен на осуществление финансовой и экономической политики, на создание необходимых условий для развития финансовой системы, на эффективное и экономное использование государственной собственности и финансовых средств, на своевременное и надлежащее исполнение финансовых обязанностей. Посредством государственного финансового контроля создаются условия для предупреждения нарушений финансового и бюджетного характера, предотвращения неэффективного и нецелевого использования государственных средств, возврата незаконно использованных средств.

В работе подробно изучено экономическое содержание финансового контроля и выявлены факторы влияющие на их эффективность. Обсуждены институциональные механизмы осуществления бюджетного контроля и особенности их деятельности в условиях рыночной экономики. В результате анализа международного опыта деятельности системы бюджетного контроля

оценена возможность их применения в республике. Представлены особенности действующей в республике системы бюджетного контроля и выявлены существующие проблемы повышения их эффективности.

В результате всестороннего анализа теоритической основы понятия «финансовый контроль», выявлены макроэкономические и организационно-правовые предпосылки для обеспечения эффективности бюджетного контроля, представлены рекомендации по их внедрению в процедуры планирования, финансирования и контроля расходов. Разработан и представлен комплекс критериев и показателей для оценки эффективности бюджетного контроля. В частности, предложено во время бюджетного контроля проводить аудит эффективности расходов, предъявлены общие механизмы их осуществления, что позволит в целом оценить использование бюджетных средств. Предложено в целях оценки эффективности бюджетного контроля применять показатели соотношения объема бюджетного финансирования подвергнутого проверке и общих бюджетных средств, восстановленной суммы за счет санкций применяемых за неэффективное и нецелевое использование бюджетных средств.

В результате всестороннего анализа деятельности системы бюджетного контроля республики выявлены существующие упущения и ошибки. Предложено, с помощью усовершенствования бюджетного контроля, повысить эффективность использования бюджетных средств. В результате всестороннего анализа оценки и проектно-целевого метода бюджетного планирования, выявлены особенности бюджетного контроля в условиях любого из этих методов. Основаны возможности повышения эффективности бюджетного контроля при программном бюджетировании и разработаны предложения их практического применения.

Объектом исследования является бюджетная система Республики Армения, а предметом – осуществляющийся бюджетный контроль. Диссертация основывается на классических работах по теории экономики, исследованиях, касающихся переходной экономики, на отечественной и зарубежной литературе отражающей разные сферы экономической политики, законах РА и других правовых актов контролирующих эту сферу. Для диссертации информационной основой являются официальные материалы и информация Национальной статистической службы РА и соответствующих государственных лиц. В рамках исследования использовались экономико-статистические, комплексные, сравнительные и факторные методы анализа.

## SERGEY SANTROSYAN

### Ways of Improvement of the Budgetary Control Mechanisms of the Republic of Armenia

The Dissertation is submitted for the pursuing a scientific degree of a Candidate of Economics Sciences in the field of Finance, cash flow and credit, 08.00.03.

The Defense will take place on 27 December, 2013 at 13:30 at the session of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia, Yerevan State University.

Address: 0009, Yerevan, 52 Abovyan Str.

### SUMMARY

The aim of this thesis is to study the ways budgetary control mechanisms can be improved and how its effectiveness can increase in the current economic climate. In the study the economics of the financial controls have been researched thoroughly and factors affecting the effectiveness of those controls have been identified.

State financial control system plays an important role in increasing the efficiency of the use of public funds. In turn, the efficient operation of the state financial control system is determined by its control means, forms and methods. Among them, clearly, the most important factor is the state control, which is aimed at implementing financial policies, creating necessary conditions for the development of the financial system, efficiently and economically using the state property and financial assets, properly executing financial obligations in a timely manner. Through state financial control systems opportunities are created to prevent financial and budgetary violations, inefficient use of public funds and to return illegally used funds.

The institutional mechanisms of conducting budgetary controls as well as their peculiarities in the market economy have been discussed.

Based on analyses of the budgetary control mechanisms within international context, its applicability in the Republic of Armenia has been measured. The peculiarities of current budgetary control system in the republic have been presented and issues of improving its effectiveness have been identified. In the study, based on comprehensive analyses of theoretical

concept of “financial control”, the prerequisites of increasing effectiveness of budgetary controls within the macroeconomic, organizational and legal framework have been identified. Introduction of budgetary control mechanisms within planning, funding and controlling of expenditure procedures have been proposed.

Assessment of budgetary control mechanisms' effectiveness' indicators and criteria have been developed and presented. In particular, it has been proposed to introduce an audit of expenditure effectiveness in the budgetary control process. The overall mechanisms of its implementation have also been presented, which will enable to completely assess how budget resources are utilized. In order to assess the budgetary control effectiveness, the indicators of budgetary funding volumes and total budgetary reserve ratios, the recovered funds from the sanctions caused by inefficient and unjustified usage have been recommended.

Based on the comprehensive analyses of republic's budgetary control system, current gaps and drawbacks in the system have been identified. In addition, improvement in effectiveness of budgetary funds utilization through improvement of budgetary control mechanisms has been proposed. As a result of comprehensive analyses of budgetary planning estimation and programming methods, the budgetary control peculiarities of each one of them have been identified. The possibilities of improving effectiveness of budgetary control by programmatic budgeting have been justified and recommendations of its practical applications have been developed. The object of the research is the budgetary system of the Republic of Armenia and the item of the research is the implementation of budgetary control.

The classic theories of economics, studies of transitional economies, literature of various sectors of both international and local economic policies, as well as Armenian laws and other legislation regulating the sector have been the bases of this thesis. Official data and figures of the Republic of Armenia's national statistical service and other relevant state organisations have been the main information sources of this study. During the research, economic, statistical, systematic, comparative and factor-analysing methods have been used.